Project funded by EUROPEAN UNION

AGREEN
Community for climate-smart agriculture

Black Sea CROSS BORDER COOPERATION

Common borders. Common solutions.

# ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ ՀԱՆՈՒՆ ՍԵՒԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԿԼԻՄԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԵԼԱՑԻ ԵՒ ԿԱՆԱՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (AGREEN)

## eMS code: BSB-1135



Բոլորս ընդունում ենք գյուղատնտեսության արագ փոխակերպման եւ «կլիմայախելամիտ» գործելակերպերով աշխատելու անհրաժեշտությունը, որը պահանջում է գյուղոլորտի բոլոր շահակիցների՝ ֆերմերների, մասնագետների, ճյուղային բիզնես կառույցների, շահագրգիռ խմբերի, բուհերի եւ գիտական հաստատությունների եւ այլոց հավաքական ջանքերը: *AGREEN* նախագծի հիմնական նպատակներից էր ցանցի ստեղծման եւ գիտելիքի անդրսահմանային փոխանցման միտումով կարողությունների ստեղծումը՝ ՍԾ ավազանում կլիմայախելամիտ գյուղատնտեսությանը զարկ տալու համար:

06/2020թ.-05/2023թ. նախագիծն իրականացրել է կոնսորցիումը՝ Դոբրուջայի ագրարային եւ բիզնես դպրոցը (Բլղ.), Կոնստանցայի «Օվիդիուս» համալսարանը (Ռում.), Թեքիրդագ նամիկ քեմալ համալսարանը (Թրք.), Կենսաբանական երկրագործության Էլկանա ընկերակցությունը (Վր.), Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոնը (Հայաստան) եւ ԱՆԱՏՈԼԻԿԻ Ս.Ա.-տեղական զարգացման կազմակերպությունը (Հուն.): Մենք միավորել ենք ջանքերը՝ խթանելու ԿԽԳ հայեցակարգը որպես գյուղատնտեսական ռազմավարություն զարգացման մոտեցում՝ կլիմայի փոխփոխության պայմաններում կայուն պարենային անվտանգություն ապահովելու համար:

Բոլոր գործընկերների հանձնառության եւ քրտնաջան աշխատանքի շնորհիվ, այսօր կարող ենք ներկայացնել AGREEN-ի հիմնական նվաճումը եւ արդյունքները, որոնք հասանելի են մեր կայքում՝ www.agreen-project.eu :




## AGREEN ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախագծի ընթացքում ստեղծել ենք գործող մասնագետների համայնք, որը միավորում է նախագծի գործընկերներին եւ հետազոտողներին, ձեռներեցներին ու արտադրողներին, ոլորտային եւ բիզնես կառույցներին, ինչպես նաեւ՝ կազմակերպությունների դաշինք, որոնք ընդհանուր հետաքրքրություն ունեն եւ միմյանց փորձ են հաղորդում ՍԾԱ-ում կլիմայախելամիտ գյուղատնտեսության բոլոր ասպեկտների զարգացման գործում: Համայնքն ունի կոնտակտային 6 կետ յուրաքանչյուր գործընկեր երկրում եւ շարունակելու է աջակցել իր անդամներին եւ ապահովել գործակցության ու փոխանակման հնարավորություններ:

Մշակել ենք Սեւծովյան ավազանի ծագում ունեցող եւ կլիմայախելամիտ եղանակով արտադրված գյուղմթերքի բրենդինգի ռազմավարության նախագիծ: ԿԽԳ միտումները վերլուծող խոր հետազոտությունից եւ տեխնիկատնտեսական հիմնավորումից հետո փորձագետների միջազգային թիմը ուրվագծել է բրենդինգի համապատասխան ռազմավարության հիմքն ու սկզբունքները, որը կարող է օգուտ բերել Սեւծովյան տարածաշրջանի թե արտադրողներին եւ թե շուկայական տնտեսավարողներին:

ՍԾԱ բնապահպանական, սոցիալական եւ տնտեսական պայմաններին հարմարված մշակաբույսերի 6 կլիմայախելամիտ մոդելներ են մշակվել եւ փորձարկվել գործընկեր 3 երկրներում՝ Բուլղարիայում, Վրաստանում եւ Թուրքիայում: Փորձարկված մոդելներից են ցորենի, տրիտիկալեի եւ բամիայի (կուտատուկ)՝ ավանդականից տարբերվող այլընտրանքային տեխնոլոգիաներով աճեցումը, ինչպիսիք են օրգանականը կամ զրոյական վարը: Փորձարկվել է նաեւ ընկուզենիների եւ արեւաածաղկի լրացուցիչ կամ ճշգրիտ ոռոգումը, ինչպես նաեւ մշակվել ու կիրառվել է սինտրոպիկ երկրագործության մոդելը: Մշակված մոդելները եւ փորձերի հաշվետվություններն ու արդյունքները կարելի է գտնել նախագծի կայքում:

https://agreen-platform.com կայքում գործարկվել է հարթակ կայուն արտադրողներին կապակցելու եւ ՍԾԱ-ում կլիմայախելամիտ գյուղատնտեսության խթանման նպատակով:

Գյուղմթերքի մեծածախ եւ մանրածախ կայուն առաքման համար լոգիստիկ կենտրոնների ինտերակտիվ քարտեզ կարելի է գտնել այստեղ՝ https://places.agreen-platform.com :



Մշակվել է «Ձեռնարկչություն ՍԾԱ-ում կլիմայախելամիտ գյուղատնտեսության համար» ինտեգրացիոն խառը շարժունության՝ վերապատրաստման 6 մոդուլներից բաղկացած դասընթացը հետեւյալ թեմաներով. ԿԽԳ մոտեցումը, կլիմայադիմակայուն ագրոպարենային արժեշղթաների ստեղծումը եւ պահպանումը, կայուն տնտեսությունների կառավարում, ԿԽԳ գործունեության ֆինանսավորում, կայուն գյուղմթերքի շուկայավարում, միջազգային առեւտուր եւ գործակցություն: Դասընթացը փորձարկել են մի խումբ միջազգային մասնակիցներ Դոբրիչում, 2022 թ. նոյեմբերին եւ այն հասանելի է նախագծի համացանցային հարթակում:

Նախագծի հիմնական վերջնարդյունքների քննարկման ու ներկայացման համար անցկացվել է միջազգային 3 գործարար խորհրդաժողով, որոնց սեւեռակետերն էին՝ կլիմայախելամիտ գյուղատնտեսության տարածաշրջանային բրենդինգը, համացանցային կապը գյուղատնտեսությունում եւ կլիմայախելամիտ գյուղատնտեսության մոդելներն ու լավագույն գործելակերպերը:

AGREEN նախագծի եւ դրա արդյունքների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք մեզ հետեւել այստեղ.
www.agreen-project.eu
www.facebook.com/project.agreen

Նյութը խմբագրել է Դոբրուջայի ագրարային եւ բիզնես դպրոցը (DABS)

Հասցե՝ Բուլղարիայի 3, ք.Դոբրիչ, 9300 Բուլղարիա

Հեռ.՝ +359 58 655 626

Էլ.փոստ՝ dabs.projects@gmail.com

Վեբկայք՝ www.dabu-edu.org

Սեւծովյան ավազան 2014-2020 համատեղ գործառնական ծրագիր

Դոբրուջայի ագրարային եւ բիզնես դպրոց (DABS)

Մայիս, 2023 թ.

Սեւծովյան ավազան 2014-2020 համատեղ գործառնական ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միությունից՝ Եվրոպական հարեւանության գործիքի միջոցով եւ մասնակից երկրներից՝ Հայաստան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Թուրքիա եւ Ուկրաինա:

Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրամիության ֆինանսական օժանդակությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու է բացառապես Դոբրուջայի ագրարային եւ բիզնես դպրոցը եւ պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական միության տեսակետները: